

ՄԻԵՏԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 7 ԱՊՐԻԼ, 1929

ԹԻԻ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐՕՆՔԻՆ ՀԻՄՆ (6)

Ազգ եւ Կրօնի

Երբ մարդիկ Առաւելոյ զաղափարը մէկ կողմ կը ձգեն, ահոնք՝ «կամ իրենք զիրենք եւ կամ իրենց ազգը պիտի տատուածացնեն»։ Եւ այս իրապէս պատահած է Մեծ Պատերազմէն ի վեր։

Բոլորած է թէ կրօնքի մէջ էսկանը ամէն բանի նուիրում է, զոր կը տածենք մեզմէ աւելի մեծ եզոզի մը հանդէպ։ Այս մեզմէ բարձր եզոզը, որ մեր նուիրման առարկան է, իբր շօշափելի իրականութիւն մեր շուրջը եզոզ ընկերային կեանքի՛ն մէջ կը գտնենք։ Հետեւաբար կրօնքի հիմը ընկերութեան մէջ է, որ մեզմէ այսպիսի նուիրում կը պահանջէ։ Այս կերպով հաստատուած տրամաբանութիւնը երկու ձեւեր կ'առնէ։

1. Ապագայ կրօնքը հայրենասիրութիւն պիտի ըլլայ։ Մէկուն բարձրագոյն պարտականութիւնն է ազգին հանդէպ հաւատարմութիւն։ Ինչ որ առհասարակ կրօնք կը կոչուի, եւ որ սովորաբար ընդունուած հիմերու վրայ հաստատուած է, պատրանք է։ Կամ աւելի՛ դէշը, թմրեցուցիչ գեղ մըն է ան՝ ազգաւ իր չքաւորութեան եւ տառա-

պանքներուն մէջ զոհ պահելու համար կամ հզօրին եւ հարուստին ձեռքերուն մէջ զործիք մըն է ան՝ ժողովրդային զանգուածները խաղաղ եւ իրենց կամքին հնազանդ պահելու, ճնշումի դէմ անոնց ընդվզումը եւ իրենց սեպհախան շահերուն համար զործելը արգելելու համար։ Այս կրօնքը պէտք է հիմէն կործանի, եւ ժողովուրդը պէտք է միացած ըլլայ ազգին ծառայելու մէջ թէ իրենց եւ թէ հասարակաց բարիքին համար։

2. Աւելի մեծ ամբողջութեան մը հանգէպ նուիրումը պէտք մըն է անհատին համար, իր բարձրագոյն օգուտին, իր մեծագոյն զարգացումին եւ իր կատարելագոյն երջանկութեան համար, քանզի մարդը էապէս ընկերային արարած մըն է։ Այս աւելի մեծ ամբողջութիւնը, իր էն ընդարձակ առումով, ընկերային կեանքի մէջ կը գտնուի։ Անհատը պէտք է ծառայէ ընկերութեան զայն իբր ամբողջութիւն եւ իբր ընկերային նշանակէտ առնելով։ Մարդկութեան ծառայել կրօնքին էութիւնն իսկ է։ Ուրիմն կրօնքին հիմը մարդկութեան ընկերային բնոյթին մէջ պէտք է գտնուի։

Անկասկած, խորհողները կրօնքի մասին սա կենսական ճշմարտութիւնը ըմբռնած են՝ թէ կրօնքը պէտք է զործնական արդիւնք ունենայ, հակառակ պա-

րագային ան ուրիշ բան չէ այլ միայն կեղծիք: «Հաւատքը առանց գործերու մեռեալ է»: Բայց աւելի ի՞նչ ըսելիք կայ:

1. Հոս ալ, ինչպէս որ տեսանք այս նիւթին միւս մասերուն մէջ, կրօնքի արտայայտութեան մէկ ձեւը, այսինքն ծառայութիւնը, կրօնական կեանքին տեղը կը դրուի:

2. Եթէ այս կէտը զանց առնենք կրնանք հարցնել թէ ինչո՞ւ անհատ մը ծառայելու է մարդկութեան: Տրուած պատասխանը սա է՝ որ իբր ընկերային մէկ էակ իր բնութեան մէկ մասն է ան: Բայց այս ընդունելով հանդերձ, սա հարցումի տեղի կայ՝ թէ արդեօք մարդը իր գիտակցութեան մէջ կըսէ՞ որ նոյնն են այսպիսի ծառայելու բնագոյնին մը՝ դուք և իր կրօնական բնագոյնը, եթէ երբէք կը խոստովանի որ այսպիսի բնագոյն մ'ունի:

3. Ազգը կրօնքին հիմը ընել կը նշանակէ մարդկային ընկերութեան մէկ մասը ամբողջին տեղը դնել: Մեր կրօնական ծառայութեան առարկան բարձրագոյն տեղը պիտի գտնուի մեր կեանքերուն մէջ: Գերագոյն և բացարձակ հաւատարմութեան այս տեղը ազգին տալ կը նշանակէ ճամբայ բանալ սա քաղաքականութեան. «Իմ հայրենիքս... իցիւ թէ ան միշտ արդար ճամբու մէջ ըլլար. բայց ի՞մ երկիրս... սխալ կամ չիտակ:»

Այս վերադարձ մըն է դէպի հինցած և դատապարտուած շրջանը մրցակցութեան և պատերազմի, զոր քաղաքակիրթ ժողովուրդները կ'աշխատին աշխարհէն վտարել: Կրօնքը, նոյն իսկ իր ընկերային ծառայութեան ձևին տակ, մէկ հատ ազգէ մը աւելի՛ մեծ նպատակակէտ մը պէտք է ճանչնայ: «Ազգասիրութիւնը բաւական չէ», ըսու Օր. Բէվըր: «Բոլոր ազգերէն վեր կայ մարդկութիւնը: Ազգայնականութիւնը աշխարհիս թշնամին է: Այս վարկածը, իրաւ-

ւագոյն ձևով, վերադարձ մ'է դէպի մարդկութեան ընդարձակեալ ցեղային կեանքին, երբ ինչ որ ցեղին օգուտ մ'ունէր կը հաստատուէր, բայց ինչ որ ցեղին կը վնասէր՝ գէշ կը նկատուէր, երբ անհատական րարոյական գիտակցութիւնը և վարք ու բարքի անհատական չափանիշերը իրենց վերջնագոյն գարգացումին չէին հասած:

4. Եթէ ընդունինք որ տիեզերական ծառայութիւնը կրօնական բնութիւնի, պատրաստ ենք այսպիսի ծառայութեան համար: Մենք հասարակ մարդերս կորո՞ղ ենք այս անձնաջինջ ծառայութեան: Մենք կը փափաքե՞նք ոչ-անձնասէր ըլլալ: Երբ այսպէս կը փափաքինք կը յաջողե՞նք: Մենք կարո՞ղ ենք կատարելապէս նուիրուելու ուրիշներու ծառայութեան: Ոյժի կը կարօտինք պէտք եղած հաստատ ուղղումը, համբերութիւնը և յարատեւութիւնը ունենալու համար: Այս ոյժը ունի՞նք մեր մէջ: Մենք միշտ անձնագոհ ծառայութեան այսպիսի կեանք մը ապրա՞ծ ենք, թէ ստիպուած խոստովանելու ենք մեր անցեալ թերացումները, ծառայութեան համար չիրականացած պատասխանատւութիւնը և աւելի ոյժի մեր պէտքը: Եթէ այսպէս է, անցեալ ձախողանքի, ըսենք յանցանքի, կամ տկարութեան և կարօտութեան մեր գիտակցութեան մէջ մեր աչքերը ո՞ր պէտք է գործնենք: Մեր սիրտերը կը գոհանա՞ն երբ ազգին կամ մարդկային ընկերութեան դառնանք նայելու: Ասոր կրնանք պատասխանել՝ մեղքի և կարօտութեան այս ըզզացումներուն վաւերականութիւնը ուրանալով և կամ ազգէն, և ընկերութեանէն վեր Մէկու մը նայելով, որ կրնայ մեր սիրտերը գոհացնել: Եթէ վերջինը կատարենք հոն պիտի գտնենք այն տեղը ուր փնտռուելու ենք իրապէս՝ կրօնք կոչուած բանը: Ի՞նչ է այս կրօնական կեանքին հիմը:

Ճ. Ի. Մէրիլ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՀՈԳԻ

Զօրաւոր և արդիւնաւոր քրիստոնեայ եկեղեցի և անհատական կեանք մը ունենալու համար կարելի է շատ մը կէտեր և պայմաններ յիշել. բայց էն կարեւոր պայմաններէն մէկն է ունենալ աւետարանչական հոգի, — հետաքրքրուիլ մարդկային ինկածութեամբ, բարոյական ախտերով, չկարենալ հանդուրժել մեղքի գոյութեան, ջանալ յամառօրէն մարդերը քրիստոսի առաջնորդել: Մեծ աւետատարանիչներ, Պօղոսէն մինչև Մուտի, այսպիսի հոգիով մը լեցուած էին:

Մր. Տ. Մուտի 1892ին Պըֆէլօ քաղաքին մէջ աւետարանչական ժողովներ կը վարէր: Փոթորկալից երկուշաբթի առաւօտ մը, երբ տակաւին իր պանդոկին մէջ էր, իր աշխատակիցներէն մէկը հարցուց իրեն թէ իր ոյժը ինչ բանի մէջ կը կայանար:

— Սաչափ միայն քեզի ըսեմ, թէ ես Աստուծոյ խօսք տուի և կեանքիս մէկ կանոնը ըրի, որ ամէն օր զոնէ մարդու մը իր հոգիին փրկութեան վրայ պիտի խօսիմ:

— Բայց, Մր. Մուտի, առիթը միշտ չի ներկայանար:

— Ան պիտի ներկայանայ եթէ միշտ Աստուծոյ հետ հաղորդակից ըլլաս և աչքդ բաց պահես առիթը տեսնելու:

Աշխատակիցը անձկանօք կ'սպասէր տեսնելու թէ այսօր Մուտին ինչպէս իր այս խոստումին և կանոնին հաւատարիմ պիտի կրնար գտնուիլ, խորհելով թէ այսպիսի անձրեւոտ օր մը զինքը այցելող մը չպիտի գտնուէր: Իրիկունը մօտեցաւ, փոթորիկը սաստկացաւ. ժողովի երթալէն քիչ առաջ Մուտի ընկերը անոր դռնաւորով ըսաւ.

— Այդին թէ այս փոթորկալից գիշերը չատեր ներկայ պիտի չըլլան:

— Բոլոր շէնքը պիտի լեցուի եթէ հա-

ւատաս որ պիտի ըլլայ:

Ապա Մուտի պատուհանէն դուրս նայելով ըսաւ.

— Ես երբէք տեսած չեմ թէ այսչափ սաստիկ անձրեւած ըլլայ, գնա՛, կառք մը գտի՛ր:

Աշխատակիցը հագիւ փողոց ելած էր երբ դէպ ի պանդոկ եկող կառք մը տեսաւ: Կառապանը երբ մօտեցաւ հարցուց թէ Մուտին ժողովին պացե՞ր է: Քիչ վերջը Մուտին և իր աշխատակիցը կառքը նստած դէպ ի ժողովատեղին կը յառաջանային:

Անձրեւը հեղեղի պէս կը հոսէր, փողոցները զետակներու վերածուէր էին: Բայց Մուտի երբեմն երբեմն գլուխը դուրս հանելով չորս կողմը կը գիտէր՝ զարմանք պատճառելով իր ընկերին: Քիչ մը վերջ Մուտի կառապանին ըսաւ որ կառքը կեցնէ. Մուտի կառքէն վար իջաւ և անձրեւին տակ վայրկեան մը կեցաւ:

Շատ չանցած մարդ մը տեսնուեցաւ որ իր հովանոցով կը պաշտպանէր ինքզինքը անձրեւէն: Մուտի կիցուց վայն ըսելով.

— Ո՞ր կ'երթաս.

— Օփէրայի շէնքը կ'երթամ. Մուտին լսելու:— Ես ալ կ'երթամ, կառքը մտիր և երթանք:

Երբ կառքը մտած էին Մուտի հարցուց նորեկին.

— Քրիստոնեայ ես:

— Ոչ, ըսաւ մարդը:

— Կուզե՞ս ըլլալ:

— Այո փոթորկալից գիշերը Մուտիին մտիկ ընելու չպիտի երթայի եթէ անոր վրայ չխորհէի, ըսաւ մարդը անձրեւի կաթիլները թօթուելով վրայէն:

Ապա իր աշխատակցին դռնաւորով ըսաւ Մուտի.—

— Աղօթէ այս մարդուն համար:

Իր ընկերին աղօթելէն վերջ Մուտի սկսաւ աղօթելու, որուն բառերը կայ-

ծախներու և որոտումներու մէջ կը լսուէին:—

—Ով Աստուած, փրկէ՛ այս եղբայրը այս գիշեր, ՀիՄԱ ճիշդ հոս, Քրիստոսի սիրոյն համար. Ամէն:

Փոթորիկը քիչ վերջը գաղբիցաւ և քաղցրազգեցիկ խաղաղութեան մը մէջ Մուտին ըսաւ:

—Եղբայր, կ'ուզե՞ս Յիսուս Քրիստոսը իբր քո Փրկիչդ և Տէրդ ընդունիլ:

—Այո, այո, կ'ուզեմ, ըսաւ մարդը:
Ծիշդ այդ պահուն կառքը Օփէրայի չէնքին առջեւ կեցաւ: Մուտի կառքէն վար իջաւ. իր աշխատակցին դառնալով ըսաւ:

—Պիլհօրն, դուն այս մարդը տոջեի նստարաններուն վրայ աեղ մը նստացուր:

Իոլոր սրահը բազմութեամբ լիցուած էր: Պիլհօրն մարդը նստեցուց և երգեցողութեամբ մը պաշտամունքին սկսաւ: մինչ Մուտի քովի սենեակի մը մէջ ծընրադիր կ'աղօթէր:

Քարոյը լմնալէն վերջ Մուտի խընդրից որ բոլոր անոնք որ քրիստոնեայ են թող հաճին ոտքի վրայ կայնիլ: Մուտիին գտած մարդն ալ ոտքի ելաւ, որուն Մուտի հարցուց:

—Դուն քրիստոնեայ ես:

—Այս գիշեր երբ հոս կուգայի կառքի մը մէջ ես փրկուեցայ: Մարդ մը ինծի համար աղօթեց. և կարծեմ այդ դուք էիք պարոն, ըսաւ նորադարձը բարձր ձայնով:

Ահա հոս կը գտնուի այդ Աստուծոյ մարդուն նշանաւոր հոգեւորոյժը:

Շատ անգամ այնքան ալ զիւրին չըլլար այս հոգին վառ պահել և եռանդը մարող պարագաներ անպակաս կը գտնուին: Թափուած ջանքերուն համապատասխան անմիջական արդիւնքներ տեսնել ուզել երբեմն կրնայ մարդը փորձութեան մասնել խորհելու թէ իր ջանքերը ապարդիւն են և թէ իր գոր-

ծունէութիւնը պէտք եղած կերպով չի գնահատուիր: Բայց կը սխալինք մեծապէս երբ այսպէս խորհինք: Հաւատքով մեր բաժինը լրիւ կատարել օր մը անպատճառ իր բարեբար արդիւնքը պիտի ունենայ:

Միջակ կարողութեամբ քարոյիչ մը անձրեւոտ կիրակի առաւօտ մը իր եկեղեցին կ'երթար քարոյելու: Ծամբան խորհեցաւ թէ այսպիսի անյարմար օր մը շատ քիչեր ներկայ պիտի ըլլային եկեղեցիին մէջ և թէ չէր արժեք իր լաւ պատրաստուած քարոյը սահաւաթիւ ունկնդիրներուն խօսիլ, և պահ մը փորձուեցաւ ետ դէպ ի տունը դառնալ: Բայց այս զօրաւոր միտումին յաղթելով եկեղեցին գնաց, ուր գտաւ երկու երկի մարդիկ, մէկը վառվռուն պատանի մը: Քարոյիչը իր լաւ պատրաստած քարոյը ներշնչեալ թօնով և եռանդով խօսեցաւ իբր թէ եկեղեցին բազմութեամբ լիցուն ըլլար: Պատանին այս քարոյէն այնչափ ազդուեցաւ որ ապաշխարեցաւ և որոշեց իր կեանքը Քրիստոսի նուիրել և եղաւ ապագայ մեծ քարոյիչ—աւետարանիչ Սքըրճըն:

Բայց աւետարանիչ հովիւը պէտք չէ միայն մարդերը զարձի բերելով գոհանայ, պէտք է նաև զանոնք սնուցանել, զանոնք առանձին չթողուլ, բոլոր քրիստոնեաները իրարու հետ միշտ յարաբերութեան մէջ պահել զարգացնելու և զօրացնելու համար հոգեւոր կեանքը տնոնց մէջ: Եւ երբ նոր ապաշխարող մը առանձին մնայ, չվայելիլով ուրիշ քրիստոնեաներու և առաջնորդներու համակիր ընկերակցութիւնը, անոր դէպ ի նախկին կեանքը, կամ ատկէ աւելի վատ վիճակ մը վերադառնալը միշտ հաւանական է:

Աշխարհի մէջ երկու ոյժեր կան միայն, սուրը և հոգին: Բայց հոգին է որ վերջապէս յաղթող պիտի ըլլայ:

Նախորդեմ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏՕՍՆԱՐԱՆԵԱՅ ԵՐԻՏԱՍՐԴՆԵՐՈՒՆ
ՀԱՄԱՐ

(Այս յօդուածը գրի առնուած է հօր մը պահանջին վրայ, այն հօր որ իր զաւակին կատարեալ մարդ ըլլալուն կը բաղձար:)

1. Ծագումնդ մի՛ մոռնար: Յեզիգ բարեմասնութիւնները առանց չափազանցելու, և անոր տկարութիւնները արգարամիտ կերպով ուսումնասիրէ և բառին բուն առումով ինքզինքդ ճանչցիր, և մի՛ մոռնար: Զանա՛ բարեմասնութիւններդ կատարելագործելու և թերութիւններդ լրացնելու: Պէտք եղածէն աւելի պարճենալու ատեն խոնարհէ և ծագումդ միտք բեր. այն ատեն խոնարհութեամբ պիտի լեցուիս սիրամարդին նման, որ իր ազնիւ տոտիկները տեսնելով սիգապանձ կերպով բացուած փետուրները վար կառնէ: Երբ աշխարհ քեզ փորձէ ունեցածդ աժան ծախելու՝ աչքդ վերցոր և ծագումդ նայէ, այն ատեն նէմիայի պէս պիտի կրնաս ըսել. «Միթէ ինձի պէս մարդը... (կ'ընէ՞):»

2. Ինկզիկնիդ մարդե Սասունոյ հետքերը զննելու: Վայելիլու և տեսնիլու ջանադիր եղիր Աստուծոյ սէրը, իմաստութիւնն ու առաջնորդութիւնը քու անհատական կեանքիդ մէջ, բնատնիքիդ և ազգիդ մէջ նաեւ աշխարհային պատմութեան մէջ: Տիեզերքի մէջ և ոչ մէկ բան զիպուածով տեղի չունենար եթէ զայն յառաջ բերող ազգակը չըլլար: Քու գործդ է միայն գիտակցիլ և հրնազանդիլ Անոր, որ ամէն ինչ յառաջ կը բերէ: Այն ատեն քու մէջդ պիտի յառաջ գան ու պիտի արժարծին 1) Անոր հանդէպ երախտագիտական զգացում, 2) Անկէ մեծ բաներ պահանջող ազօթքի կեանք, 3) Անոր համար մեծ գործերու ձեռնարկող քաջութիւն, և 4) զԱյն քաղովող աւետարանական հոգի:

3. Աշխատե՛ առե՛ն մարդուն, առե՛ն բանին և առե՛ն դիպիլն շաւ կողմը առաջին տեսողը և ցուցնողը ըլլալ: Անոնք որչափ ալ գէշ ըլլան անպատճառ հաճելի և օգտակար կողմ մ'ունին: Դուն խնդրէ՛ և պիտի գտնես. քանզի «ամէն փնտռողը կը գտնէ»: Տաք սկահակը իր կանթէն բռնել ապահովագոյն միջոցն է: Ոեւէ բանի մը միշտ սկսէ անոր լաւ կողմը գտնելով և զայն քաջալերելով, եթէ նրապատակդ չինել և բարեկարգել է: Անոր թերութիւններէն ճառելով սկսիլ կը նշանակէ անվերջանալի ճամբորդութեան սկսիլ, որով ո՛չ ինքզինքդ և ոչ ուրիշը գէպի բարձր բարիք կրնաս առաջնորդել:

4. Միշտ բաց սիրտ ունեցիր ճշմարտութեան հանդէպ: Սուտը յաճախ ճշմարտի հազուստով ծագուած կը պտըտի: Բայց ճշմարտութիւնը կ'ախորժի պարզ եղած վիճակովը պտըտելէ: Ուստի հետամուտ եղիր ճշմարտութեան ճանչնալու: Պատրաստ եղիր սորվիլու ունէ չինականէն, տղէտէն կամ մանուկէն, գիտցածներդ չգիտցածներուդ բազդատմամբ ծովու մէջ կաթիլ մը ջուրի կը նմանին, և թերեւս սխալ են անոնք գոր գիտնալ կը կարծես: Ծշմարտութիւնը առաջին նայուածքով չի ճանչցուիր, ինչպէս որ վախազդեցիկ Պապուկ Կաղանդը յաճախ քեզ սիրող և քու սիրած հայրդ կրնայ ըլլալ: Ուրեմն, գաղափարներդ սրբազրութեան և ծանօթութիւններդ կատարելագործումի ենթարկէ միշտ:

5. Միշտ պահպանե՛ ինկզիկնիդ արձանարհուերու ծառայութիւններու համար և ինկնադասուերու առաջինութիւններու համար: Քանզի աշխարհ տակաւին դարձի եկած է այսչափ ցած քննադատներ յառաջ բերելէ: Մի գիջանիւր մարդերէն շնորհաւորումներ մուրալու: Ժամանակ մի վատնելի մեծարանքներ սպասելու: Մի ծանձրանար ծառայութիւններու սանդուխն ի վեր մագլցելու: Քու վար-

ձատրութիւններդ քու մէջդ նկարագրի վերածէ: Արժանիքը չի մեռնիր, եթէ նոյնիսկ մեռնի, աւելի փառքով յարութիւն առնելու համար անժամհայ կերպով կը մեռնի:

6. Ներքին եւ արտաքին պայմաններու միջոցին մի անսպարեւ Աստուծոյ զոս մեկի մը օգնութիւնը պահանջեալ: Հաւատա օր, Արարիչը քեզ քու զօրութեամբ ինքեզդ հաւատար կարողութեամբ ստեղծէր է: Դուն անսահման կարելիութեանց հաւաքածոյ մըն ես: Եթէ դուն կրնաս քու թաքուն գոնձերուդ փոքրագոյնը գրտնել, ուրիշ արարածներու մեծագոյն օգնութեանց աւելին գտած կ'ըլլաս: Առանց պաշտօնապէս նախախնամութեան առաջնորդուած ըլլալու արարածէն օգնութիւն խնդրել կը նմանի այն ապօրինի զործողութեան՝ զոր պարսպանքը կը փորձուի ընել, երբ քննութեան պահուն իր ընկերէն զապտնի օգնութիւն կը մուրայ: Իժուարութիւնը այն բանային է որ ինքզինքդ պիտի բանայ քեզի եւ աշխարհի: Աշխատէ զայն զործածելու:

7. Առիթը մի՛ կորսնցնիր անխառնած անհատի մը, սկզբունքի մը, նոյնիսկ անստեղծութեան պայմաններու պայմաններու: Պատմութիւնը, եթէ ոչ ատենին բայց օր մը պիտի գնահատէ եւ պիտի վարձատրէ այն մարդիկը որոնք արդարութեան եւ արդարին համար իրենց անձերը կը գոհնեն: Եթէ երկիրը չճանչնայ, երկիրքը պիտի ծանուցանէ զայն:

8. Ազնիւ եղի՛ր սխալը ընդունելու, շփեալու եւ անոր վնասը հասուցանելու մեջ: Բութերութիւնդ չօյնողը ո՛վ որ ալ ըլլայ է՛ն անկեղծ շնորհակալութեան յայտնէ անոր եւ անմիջապէս սկսէ զայն շահելու: Երբ ներողութիւն խնդրելու փորձութեան մէջ գտնուիս փոխանակ մէկ անգամ ուղիւ մի քանի անգամներ խնդրէ զայն. այսպէս ընելով քու մէջդ զրտնուող ազնուութեան համար վճարական

յաղթանակ մը ապահոված կ'ըլլաս, սխալը մտածելն իսկ արգիլած կ'ըլլաս, եւ ուրիշներուն օրինակ եղած կ'ըլլաս: Ծշմարիտ խոստովանութիւնը ոչ մէկը չէ պատկերացած, բայց անոր տէրը միշտ բարձրացուցած է:

9. Խնայողութեան հոգ տար: Աւելորդ ժպիտ մը, նայուածք մը, խօսք մը, խօսք վատնուած վայրկեան մը, լուցիկ մը, տառնայ մը անհատուցանելի վնասներու առաջնորդած են: Եթէ խնայողութեան կանոնը կիրարկես ապրուստի համար, հարուստ կ'ըլլաս, եթէ մարմնի համար զործածես ուժով կ'ըլլաս, եթէ մտքի համար զործածես զիտուն կ'ըլլաս, եթէ պարտականութիւններդ կատարելու մէջ զործածես առաքելի կ'ըլլաս, հոգեւոր կեանքի մէջ զործածելով սուրբ կ'ըլլաս: Խնայողութիւնը երկրիս եւ երկիրքի մէջ է՛ն անհրաժեշտ օրէնքն է:

10. Մարդերը ուսումնասիրելու հոգ տար: Ի՛նչ ընդարձակ գրադարանը մարդկութիւնն է: Անկարելի է գտնել երկու մարդիկ որոնք իրարու հաւասար ըլլան. հետեւարար իրաքանչիւր անհատ զո՛ւս ուսումնասիրութեան առարկայ պէտք է ըլլայ, որպէսզի տա՛ն մէկէն զատ օգուտ մը կարենաս անգործել: Մեր առանձնաշնորհումն է մարդոց ինկած տեղէն զգուշանալ, անոնց առաքելութիւններուն հետեւիլ եւ այս կերպով նախկին սերունդին ուսերուն վրայ ելլելով բարձրանալ: Պէտք է յիշել արդեօք թէ Յիսուս Քրիստոսի կեանքը կեանքերու մէջ բարձրագոյնն է: Այս է այն կեանքը, զոր Աստուած տեսելով կ'որախանայ, եւ զոր մարդիկ տեսնելով անոր կը հիանան: Ան ոչ միայն կեանք է այլ կենարար ալ է: Ինքն է բոլոր գեղեցկութեան կեդրոնը, կատարելութեան ազրիւրը, բազմաքններու նշանակէտը, իտէալներու կատարելագոյնը: Ս. Գրքի մէջ Անոր կ'հնարանապատկերը

է՛ն խոր, բայց միեւնոյն ատեն է՛ն պարզ զիծերով նկարուած է: Անոր նայողներուն Անոր նմանիլը իրականութիւն մ'է. ուստի միշտ Անոր նայէ եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ:

Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԱՀԷՆ ՎԵՐՋ ԿԵԱՆՔ ԿԱՅ

(Շար. և Վերջ)

3. Յոյսի Օրհնիւր. Յոյսը մարդկային մտածումի ամենազօրաւոր և ամենայաւրատեւ յատկութիւնն է: Հոս է ամէն մէկ անողջ մտքի խարխիւը: Առանց յոյսի աշխարհի գործերը մէկ ժամուան մէջ դադարի պիտի ենթարկուին: Յոյսը անմահութեան մարդարեւութիւնն է. եթէ առանց յոյսի կեանքը անկարելիութիւն մըն է, ուրեմն տիեզերք մը առանց ապագայի — ապագայ հոգեւոր կարողութիւն ունեցողի համար — անհեթեթութիւն մը պիտի ըլլար: Ժամանակը յաւիտեանականութիւն է և կը չափուի հիւլէնկերով, որոնք կը կոչուին «բոպէնիւր»։ Յոյսը՝ անմահութիւնն է իր սաղմնային վիճակին մէջ: Արդ Ուսլիւր Սքաթի օրագրութեան վերջին բառերը ասոնք են. «Վազը մենք պիտի...» Ներկան երբեք չի վճարեր մեր «առօրեայ ծախսուածներուն փոխարէնը»։ Ապագան է որ բոլոր բաներուն արժէք կուտայ: «Նեաեցէք զիս Արնոյի մէջ բայց Յարութեան օրը պիտի գտնէ զիս», կ'ըսէ Սափօնարօլա: «Զգեցէք որ երթում քանդի օրը կը ծագի», կ'ըսէ Տանիէլ Վէպսիլը իր դուստրը իր մահուան անկողինին մէջ: Վիքթօր հիւկոյին վերջին խօսքերը ասոնք են. «Աստուծոն նորէն աշխատելու պիտի երթամ»:

4. Մարդկային Բնագոյի Օրհնիւր: Երեք բաներ կան որոնց չեմ կրնար հաւատալ: Չեմ կրնար հաւատալ թէ Աստուած կ'ըստեղծէ այս աշխարհը և յետոյ իր կրօնակը կը դարձնէ անոր, թէ Ան կ'ստեղծէ մարդը և ապա կը ձգէ զայն, թէ Աս-

տուած մարդուն սրտին մէջ կը դնէ անմահութեան փափաքը և յետոյ կը թերանայ պէտք եղածը հայթայթել անոր իրականացման համար: Մարդկային սրտին մէջ ամէնէն զօրաւոր յոյսը եւ ամենախոր փափաքը անմահութեան համար եղողն է. Ռուս մարգարէն Թոլսթոյ ինքնիրեն կը հարցնէ. «Արդեօք կեանքը ինծի համար ունի՞ որեւէ բան մը որ իմ մահուամբ չպիտի վերջանայ»։ Եւրալուաւիան Պիվերէճ սա մէջբերումը կ'ընէ. «Աշխարհի բոլոր հարստութիւնը տալու պատրաստ եմ եթէ երբեք կրնամ վստահ ըլլալ հանդերձեալ կեանքի մը մասին»։ Անմահութեան այս տիեզերական բնազդը, իրրեւ մշտնջենական անշեջ տենջը մարդուն, ապագայ կեանքի մը տատուածային երաշխիքն է: Անիկայ Աստուծոյ ձայնն է հոգիին մէջ: Աստուած մարդկային սրտին մէջ որեւէ փափաք մը չէ դրած որուն համար պէտք եղածը առատօրէն հայթայթած չըլլայ: Ան պատրաստած է երաժշտութիւն աւանջին, զեղեցկութիւն՝ աչքին, բոյր՝ ուռնդին, կերակուր՝ մարմնին, խորհորդ՝ մտքին, սէր՝ սրտին համար: Աստուած ամէն մէկ բնազդին գոհացում տուած է: Ուրեմն հոգիիս ամենախոր բնազդը սո՛ւտ պիտի յայտնուի: Ոչ երբեք, այդ անկարելի է տիեզերքի մը մէջ, որ սէրէ արատարդեալած է: Փրօֆ. Հրքոյլի կ'ըսէ. «Ես կը նախընտրեմ ունենալ գոյութիւն մը դժոխքի մէջ, քան երբեք գոյութիւն չունենալ»։ Եւ թէնիսըն, ընտիր ցեղի մը անուշ երգիչը, կը զօչէ. «Եթէ անմահութիւն ըսուած բանը գոյութիւն չունի, ուրեմն ծաղրող դե մը ստեղծած է մեզ: Աստուած մարդը չարչարող հրէշ մըն է»:

5. Կեանքի Շատ Կարճատեւ է:

Մարդուս կեանքը սահման ունի, բայց իր խորհուրդները անսահման են: Հէրպերթ Սթենսըրը, մեծ գիտնականը, այսպէս ըսաւ. «Կ'երեւի թէ, մարդուն բոլոր

ընել կրցածը բանի մը սկսիլ և մեռնիլ է: Էնտրիու Քարնէկի օր մը իր մէկ բարեկամին ըսաւ. «Տասը տարի աւելի ապրելու համար հարիւր միլիօն տօլար տալու պատրաստ եմ»: Ծօրճ Էլիւթ, մեծ քերթողուհին, կը բացականչէ: «Տարիները ի՞նչ շուտ կ'անցնին»: Պապ Լէօ ԺԴ. 90 տարեկանին այսպէս ըսաւ. «Ծըբագիրս լրացնելու համար տակաւին չորս տարին հրու պէտք ունիմ»: Էլիզապէթ թագուհին 40 տարի իշխելէ վերջ հոգեւարքի սառտիկ մէկ նոպային հեւալով ըսաւ. «Միլիօններ կուտամ մէկ վայրկեանի համար»: Էմմանուէլ Քանզի անմահութեան մասին իր փաստ ըսածը այս էր. «Երկրիս վրայ չլրացած գործեր»:

6. Յալիսկանական Արդարութեան Օրենքը: Խորհէ կեանքի անհաւատարութեանց մասին: Երկրիս աշխարհ մըն է որ սըխալներով և անիրաւութիւններով շաղխուած է: Բանապետներ պալատներու մէջ կ'ապրին, մինչ հերոսներ զենդաններու խորը կը հիւծին: Արդար մարդիկ անօթի կը մեռնին, մինչ անարգարներ ինջոյքներ կը սարքեն: Այո, անմեղները իրենց ծնունդէն առաջ կ'անիծուին, կամ Շէլլի բացատրութեամբ անոնք «կեանքի մէջ խորտակուելու համար կը ծնին»: Շատ մը հաշիւներ երբէք չեն կարգադրուիր այս կեանքին մէջ: Ինչ ըսել զինեպանին և որբեւորին հարբած զաւակին, ճամբէ հանողին եւ իր զոհերուն մասին: Բայց ինչո՞ւ երկարենք օրինակներու շարքը: Արդարութիւնը՝ օրենքի օրենքի մը մէջ, կը պահանջէ որ աշխարհային խնդիրները ապագային մէջ մաքրուին: Արդարութեան մասին մարդկային այս զգացումը Աստուածայինէն աւելի սուր չի կրնար ըլլալ: Այն Աստուածը որ մարդուն հոգիին մէջ արդարութեան այս բնազդը դրած է, պէտք է որ արդար ըլլայ: «Բոլոր Լըկրին գաւառները արգարութիւն պիտի չգործէ»:

Հոգին մէկ պատասխան ունի միայն:

7. Բնութեան Անկործանելի Ընդարձակ Օրենքը: Այս նիւթական տիեզերքը շատ հին գոյութիւն մ'ունեցած է: Բայց անոր ծագումէն մինչեւ հիմա ջուրի ոչ մէկ կաթիլ, փոշիի ոչ մէկ հատիկ, լոյսի ոչ մէկ ճառագայթ, օդի ոչ մէկ հիւլէ տակաւին չէ կորսուած: Այսպէս ալ երբ աւելի բարձր արժէքներու ոլորտը ելլենք, ապահով կերպով կրնանք ըսել՝ թէ հոգեւոր կեանքի ոչ մէկ կայծը տակաւին չէ մարած: Բատիումի պղտիկ մասնիկ մը ութսուն հազար տարի կը տեւէ, բայց ուղեղիկ ճիշդ կեդրոնը հոգեւոր կրակին այդ կայծը, կրանթիկայ լեռնէն, այրող արեւէն, պլպլացող աստղէն աւելի երկար պիտի ապրի: Քարնաքի մեծ տաճարը կրնայ փլլի, Հէրքելէսի սիւնները (Ճիպրալթարի Նեղուցը) կրնան անհետանալ, հին Էօնտօնը կրնայ անապատի վերածուիլ, Հոռովի գետինը կրնայ մոռցուիլ, Էանայի և Վեսուվի կրակները կրնան շիջիլ, բայց Հոգիւն պիտի շարունակէ զոյ ըլլալ մինչեւ յաւիտեան: Գետերը կրնան չորնալ, ծովերը կրնան չօգիանալ, լեռները կրնան մաշիլ, աստղերը խաւարիլ և արեւը կրնայ ինքզինքը մուծով ծածկիլ, բայց Հոգիւն պէտք է որ շարունակէ, ապրի յաւիտեան: Մարդկային ձեռքը կրնայ Կորսնցիկ իր ճարտարութիւնը, աչքը կրնայ զրկուիլ իր լոյսէն, ականջը կրնայ խլանալ, ոտքը կրնալ գայթիլ, միտքը կրնայ թափառական ըլլալ, ուղեղը կրնայ իր խորիսը կորսնցնել, բանականութիւնը կրնայ խաւաքիլ, բայց Հոգիւն պիտի ապրի յաւիտեան:

Պէյրուք Թրգմ. Ա. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Մօտերս լուր մը կարգացի որ կը հաղորդէր թէ Ուէսթմինսթրի կեդրոնական սրահը իր արձագանգը կորսնցնուցած է: Երկար ժամանակէ մը ի

վեր ձայն մը կ'արձագանգէր ունկնդիր-ներէն, ահաճութիւն պատճառելով խոսողին: Հիմա այդ արձագանգը բռն-ուած է:

Արձագանգէ մը ազատիլը գրեթէ երեւակայելի ամէնէն զժողարին բանեւէն մէկն է: Նոյնքան զժողարին է գրեթէ շատ մը մարդոց համար արձագանգ մը ըլլալէ խոսափիլ: Աշխարհի վրայ ուրիշ ոչ ինչ այգքան զիւրին է որքան արձագանգը ըլլալ ուրիշներու կարծիքներուն եւ զազափարներուն: Խորհիլը միշտ զժողարին է, եւ եթէ կարելի է ուրիշներէն ստանալ ճշմարտութիւններ եւ կամ կէս ճշմարտութիւններ ինչո՞ւ մենք անձամբ խորհելու զժողարին գործը յանձն առնենք:

Եկեղեցիին մէջ ուղղափառութիւնը եւ անոր համակերպութիւնը շատ կը գնահատուի, եւ շատ ալ իրաւացի պատճառներով: Սակայն եւ այնպէս կարելի է նաեւ որ անոնց ծայր տոտիճան շեշտուած գնահատումը յաճախ վտանգաւոր ըլլայ: Եթէ մենք հաւատքի եւ խօսքի անփոփոխ եւ միօրինակ կանոնաւորութիւնը շեշտենք, այնպէս որ մեր քարոզիչները եւ վարդապետները միմիայն անցեալի արձագանգները ըլլալու դատապարտուին, այդ ժամանակ հոգեւոր առաջնորդութեան թաղը ուրիշներուն պիտի տրուի:

Եկեղեցի մը կայ որուն առաջնորդները իրենք կընեն իրենց ժողովուրդին բոլոր մտածումը: Ժողովուրդը իրեն համար անկախ պրպտում պէտք չէ որ ընէ: Իրենց հաւատալիքները պատրաստ չինուած են: Իսկ անոնց հաւատքը, իր իմացական առումով, որոշապէս գծուած է: Մենք որեւէ նոր բան, որեւէ քաջ եւ խիզախ բան մը չենք ակնկալիր այդ եկեղեցիէն՝ կրօնական մտածումի մարդին մէջ: Սերունդ մը այդ եկեղեցիին մէջ ուրիշ բան չէ այլ միայն վերջինին արձագանգը:

Բայց մենք ալ կրնանք պահանջել այնպիսի խիստ ուղղափառութիւն մը եւ համակերպութիւն մը, որ միայն կը ծառայէ արտադրելու այդ տեսակ մարդիկ որոնք վախկոտ են որեւէ ռահ-վիրայի դեր կատարելու համար: Ուրիշ մեկի կ'իյնայ շատ ուշադիր ըլլալ կրօնական մարդին մէջ եւ զանգուածային մտածելակերպին, զանգուածային զգացումի եւ զանգուածային հայեցակէտին դէմ պատուար հանդիսանալ: Որովհետեւ այսօր մենք իրական ծայնեցող պէտք ունինք եւ ոչ թէ պարզ արձագանգներու: Մարդարէններ պէտք են մեկի եւ ոչ թէ ձայն հանող ընդօրինակիչներ:

Փրօֆ. Հուայթհէտ զիտել կուտայ թէ մինչ զիտական մարդին մէջ նոր հարք մը, որքան ալ յեղաշրջող փոփոխութիւն պարտադրէ ընդունուած դրութեան վրայ, միշտ իբր յաղթութիւն մը եւ յառաջացում մը կը նկատուի, բայց կրօնական մարդին մէջ աւանդական եւ յոգեւորական հայեցակէտի մը մէկ կողմ դրուելը գրեթէ միշտ իբր պարտութիւն մը, իբր կորուստ մը նըկատուած է: Փրօֆ. Հուայթհէտ միայն ասոր մէջ կը գտնէ այդ միակ պատճառը եկեղեցիին ազդեցութեան եւ վարկին օրէ օր կորուստին:

Ապագան ձայներու կը պատկանի եւ ոչ թէ արձագանգներու: Ըլլայ զիտութեան մէջ, ըլլայ դատարարականութեան մէջ, եւ ըլլայ կրօնական ու քաղաքական մարդին մէջ, մարդիկ այսօր կը խորհին, եւ կը մերժեն լսել եւ մանաւանդ ընդունիլ ուրիշներու կարծիքները եթէ իրենք ալ այդ ուղղութեամբ չի խորհին:

Հոգեւոր ոյժի եւ հոգեւոր զօրութիւնը, բարոյական առաջնորդութիւնը եւ Գրիստոնէական ռահվիրայութեան դերը տակաւ առ տակաւ պիտի տրուի անոնց՝ որոնք ջերմ հիւրնկալներն են նոր պըր-

պատումներուն: Ամէն մէկ քարոզիչ, զաստիարակ եւ զործաւոր որ եկեղեցիին մէջ իբր ազգեցութիւն եւ հեղինակութիւն նկատուիլ կ'ուզէ պէտք է զիտնայ թէ ինք զազափարի, համոզումի եւ հաւատքի տէր մարդ մըն է, չորոնք ինք պարկեշտ եւ խղճամիտ մտածումով եւ հաւատարիմ կենցաղով իւրացուցած է:

Արձագանգ մը ըլլալ կրնայ բուժուիլ: Թէեւ զժողովրդին գործ մըն է բայց կարելի է անոր վերջ մը տալ: Այսպէս մարդ մը, իբր նոր աւետարաններու պատգամաբեր մը կրնայ յառաջ գալ եւ իրաւունքով խօսիլ այդ տեսիլքը եւ ճշմարտութիւնը չոր Աստուած զործի եւ կեանքի միջոցաւ իրեն յայտնած է:

Այսօր ձայներ կան եւ ոչ արձագանգներ որոնք իբրեւ ախոյաններ եկեղեցիին պատգամով յառաջ կուզան: Թէեւ անոնք միշտ ալ նոր բան մը չեն ըսեր, բայց անոնց խօսքը կը հնչէ իբր անհատական հաւատքին եւ համոզումներուն արոյայտութիւնը, — արդիւնքը համբերատար մտածումի, խորհուած այդ նիւթերու շուրջ կեանքի իրական փորձառութեան մէջ: Այս տեսակ պատգամներու մէջ իրականութեան զօրաւոր չեղտ մը կայ:

Այսօր բեմերէն խօսող մարդարէական ձայներ կան: Անոնք վերաշինող պատգամ մը ունին որ մարդը կ'ամրապնդէ հաւատքի եւ Աւետարանի բարոյական պահանջները ապրելու մէջ: Յաճախ անոնք անընդունելի ճշմարտութիւններ կը յայտարարեն: Յաճախ տեսիլքներ կը տեսնեն զոր մեզմէ շատեր չեն կրնար տեսնել: Կրկին ու կրկին մեզի կոչ կ'ընեն որպէսզի բաց սիրտ մը ունենանք, Աստուծոյ յարաճիւն ճշմարտութեանց հանդէպ:

Պէյրուք

ՅՈՒՆ. ԱՐԿԱՐԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յովհ. 17. 21: «Որպէսզի ամէնն ալ մէկ ըլլան ինչպէս դո՛ւն, ով Հայր, իմ մէջս՝ ու ես քու մէջդ, որպէսզի անոնք ալ մեր մէջը ըլլան, որպէսզի աշխարհ հաւատայ թէ դուն զրկեցիր զիս:»

Յիսուս Քրիստոս մեր երկնաւոր Փրկիչը երեք կամ երեքուկէս տարի իրեն հետ ապրող աշակերաններուն իրենցմէ բաժնուելու ատեն կարգ մը պատուէրներ տալով հրաւիրեց զանոնք որ մէկ ըլլան եւ անոնց համար ազօթեց: Մեր Տ'րջ այս ազօթքը անոնց հարուստ զիտուն եւ կամ պաշտօնէութեանց զլուխ անցնելուն համար չէր, այլ Այն մատոյց այս մաղթանքը որպէսզի անոնք մէկ ըլլան: Իւր Աստուածային աչքով ան տեսաւ որ այս նորաստեղծ բայց փոքր եկեղեցիին մէջ բաժանումներ անգի պիտի ունենային եւ ապա եկեղեցին միծապէս պիտի վնասուէր: Ինքը քաջ զիտէր թէ այս եկեղեցին տարբեր բաժանումներով միասին ազգերէ եւ ցեղերէ ալ բաղկացած պիտի ըլլար: Ամէնքը թագաւոր կամ հպատակ, զիտուն կամ ազէտ, աղքատ կամ հարուստ եւ տէր թէ ծառայ գալով Քրիստոսի եկեղեցոյն մէջ պիտի նստէին: Շատեր տարբեր ըզգացումներով եւ շատեր ալ տարբեր վարդապետութամբ լեցուած պիտի ըլլային եւ շատ բնական էր որ այս կերպով խառնակութիւններ եւ անհամաձայնութիւններ ծայր պիտի տային:

Միութիւն ըսելով թող մարդիկ արտաքին կազմակերպութիւններու եւ կամ ծէս եւ արարողութիւններու մէկ ձեւի վրայ զործելը չի հասկնան, որովհետեւ բուն նպատակը այդ չէ: Ազգային եւ կամ եկեղեցական միութեան մը չէ որ կ'ակնարկենք, այլ ներքին միութեան մը, նպատակի, վարդապետութեան եւ վերջապէս հաւատքի եւ սիրոյ միութեան մը:

(Ա.) Նսրսսսկի Միտրիւն:—Թէեւ զա-
զափարններու միութիւն մը կազմելը շատ
զժուար բան մըն է, սակայն և այնպէս
զազափարններու զօրեղ միութեան մը
պէտքը կայ: Մարդիկ իրարմէ մտքով,
կարողութեամբ, հասկացողութեամբ և
ընդունակութեամբ շատ կը տարբերին և
այսպիսով իրենց աչքով դիտած իւրա-
քանչիւր նիւթ տարբեր կը տեսնեն:
Բայց նպատակի միութիւն մը անհը-
րաժեշտ է: Զօրապետ մը իւր զօրա-
գունդին մէջ կրնայ տարբեր զգեստնե-
րով հագուած և իրարու ներհակ բնու-
թեամբ օժտուած զինուորներ և սպաներ
ունենալ և երբ ասոնք ճակատամարտ մը
շահին միթէ հազուադէպ և իրենց
հակամարտ բնութեանց էութիւնը շահ-
ուած յաղթանակին որեւէ փնտռման մը
կրնա՞նք: Ո՞վ չէ զիտած վայրաշարժին
զանազան և բարդ մասերուն միասին
գործելը և ահագին ուժով կառախումբը
քաշելով տան իւր: Ուշադրութեամբ
մտիկ ըրէ երաժշտութեան մը ներդաշ-
նակ ձայներուն, թէ և բազմազան ելե-
ւէջներ ունի բայց կարող երաժշտագէտի
մը զեկազարութեամբ մէկ նպատակ մը
և կատարեալ ներդաշնակութիւն մը յա-
ռաջ կուգայ: Ահա այսպէս ալ Քրիստո-
սի եկեղեցւոյն մէջ իրարմէ բոլորովին
տարբեր զգացումներով և բնութիւննե-
րով անհասանելի մէկ նպատակ ունենա-
լու են, — Առտուծոյ թագաւորութեան
յառաջացումը: Երբ քրիստոնեաներուն
Հայրը, Փրկիչը, հաւատքը, մէկ է, ին-
չօ՞ւ իրենց ամէնուն նպատակն ալ նոյնը
չ'ըլլայ:

(Բ.) Վարդապետքեան Միտրիւն:—Շատ
զօրաւոր և յոյժ կարեւոր կապ մըն է այս:
Եթէ տէրութիւն մը ինք իր մէջ մանր
մունք իշխանութեանց վերածուի վստա-
հարար իրեն զօրութիւնը կը նուազի:
Բայց երբ վարդապետութիւնները միա-
նան շատ աւելի օգտակար արդիւնքներ
յառաջ կուգան: Շատ անգամ պատիկ

տարբերութեամբ մը երկու վարդապե-
տութիւններ զիրար հակասելու կ'իլլին:
Օրինակի համար, Մկրտութեան մէջ ամ-
բողջ մարմինը ջուրը մխրճուելու է թէ
ոչ սրսկելով և և կամ գլխէն թափելովը-
նելու է, կամ հաղորդութեան սեղանին
նուիրուած հացը խմորո՞ւմ թէ անխմոր
ըլլալու է: Այսպիսի հակամարտ հառ-
կացողութիւններու արդիւնքը շատ ան-
գամ յառաջ կը բերէ գործի թուլացում
և Աւետարանի քարոզման մէջ անձկու-
թիւն:

(Գ.) Իրաւունքի Միտրիւն:— Արեւուն
տակը ապրող ամէն անձի համար մեր
Տէրը պարզեալ է Քրիստոսական և հոգե-
կան կարողութիւններ և գտնուած մթ-
նոլորտէն միեւնոյն պարզեաները ընդու-
նելու իրաւունք տրուած է իրեն: Այս
երկնային բարեաց շնորհքներէն միայն
շատ քիչերէն են որ լիապէս կ'օգտուին:
Այսպէս եղած է սկիզբէն մինչեւ ներ-
կայ օրերը և տկարին, տղէտին և զա-
տապարտեալին սեպհական իրաւունքը
աւելի զօրաւորին, զիտունին և իշխողին
կողմէ կողոպտուած է: Քրիստոնէութիւ-
նը իւր ազատութիւնը և իրաւունքը ա-
մէն մէկ անհատի յանձնած է այսպիսով
զանոնք առանձնաշնորհումներով ողո-
ղած է: Քրիստոսով ոչ հրեայ, ոչ հե-
թանոս, ոչ ծառայ և ոչ տէր, ոչ արու
և էգ զոյութիւն ունի: Ամէնուն իրա-
ւունքը, առանձնաշնորհումը և ազա-
տութիւնը միեւնոյնն է: Միութիւն
բայց իրաւունքի մէջ եղած միութիւնը
քրիստոնէական կրօնքին իսկական յատ-
կանիչն է:

(Դ.) Սիրոյ Միտրիւն:— Առանց սիրոյ
միութեան ամէն բան ոչինչ է: Երբ սի-
րոյ միութիւնը պակսի եկեղեցւոյ զօ-
րութիւնը կը տկարանայ, անոր անգամ-
բուն միջև վէճը կը շատնայ և ասիկէ վերջն
ալ եւն ու հպարտութիւնը կ'աւելնան ու
եկեղեցին կը կործանի: Վէճը, կռիւը,
զիւմացիւնն յանցանքը մեծ տեսնալու

տենջանքը օր ըստ օրէ կ'աւելնան: Սիրելինէ՛ր, սիրոյ միութիւնը մեծ գործ կը տեսնէ: Իրարու յանցանքներու հանդէպ ներող հոգի ունենալ, զոհողութեան ոգի ունենալ, քրիստոսի եկեղեցւոյն խաղաղութիւնը փնտռել և վերջապէս քրիստոնէութեան և եկեղեցիին պալիք անարգանքները վերցնել ու սրբել՝ ահա ասոնք են սիրոյ միութենէն ծնած բարիքները:

Միութեան զօրութիւնը շատ մեծ է:

(1) Քրիստոնէական միութիւնը կը բօնքին մեծութիւնը կը ցուցնէ: Եկեղեցւոյ մը զօրութիւնը իւր անդամներուն շատութեան, հարուստ եւ կամ գիտուն ըլլալուն մէջ է, այլ անոնց միաբան ըլլալուն մէջ կը կայանայ: Պարսիկ միապետներէն Քսերքսէս հինգ միլիօն զինուորներով և իւր անհամար հարստութեամբ չկրցաւ փոքր Յունաստանի յաղթել. եթէ մէկ բան միայն ունենար յաղթութիւնը պարսից կողմը կը մնար — Միութիւն:

(2) Ա. հոգւոյն մեր մէջ գործելուն համար նորէն միութեան պէտք ունինք: Եթէ Ա. հոգին բացակայի տրուած քարոզները և մատուցուած աղօթքները պարագի կերթան:

(3) Եկեղեցւոյ մէջ միութիւնը Աւետարանը քարոզելու և անով մարդիկ դարձի բերելու համար ամենակարեւոր ազդակն է: (Յովհ. 17. 21) «Որպէսզի անոնք ալ մեր մէջը մէկ ըլլան, որպէսզի աշխարհ հաւատայ թէ դուն զիս զրկեցիր:»

(4) Եկեղեցւոյ ներքին գործերուն մէջն ալ միութիւնը կարեւոր է: Եթէ եկեղեցական ժողովի մը մէջ խնդիր մը լուծելու համար միութիւն և սէր չըլլի և զաղափարներ զիրար հակասեն, ներքին գործերը միթէ կրնա՞ն կարգադրուիլ: Մենք միեւնոյն սեղանին առջև կ'աղօթենք: Երբ եկեղեցին խառնակ վիճակ մ'ունի, ինչպէ՞ս աղօթք մատու-

ցանելու է և կամ ինչպէ՞ս «և ներէ մեզի մեր պարտքերը ինչպէս և մենք ալ կը ներենք մեզի պարտական եղողներուն» ըսելու է:

Աստուծոյ սեղանին մօտեցողները միութեամբ և սիրով մօտենալու են քանզի այդ սեղանը սիրոյ և խաղաղութեան համար զրուած է: Ահա այս ամէնը իբր պատճառներ նկատելով Աստուծոյ եկեղեցիին նպատակը, վարդապետութիւնը, ազատութիւնը և սէրը մէկ ըլլալու են:

Մենք քրիստոնէական ենք, որ Աստուծոյ եկեղեցիին անդամները և յոյսն ենք, կը վայելէ՞ մեզի որ անհամաձայնութեան և սիրոյ մէջ անմիաբանութեան անկողինին կառչած մնանք: Պէտք է ոտքի ելլենք և գործի մղուինք, երբ եկեղեցիին, ազգին և ընտանիքին համար սիրոյ և միութեան հոգիով գործել պէտք է: Աշխատինք և Տէրը ինքը խոստացած է օգնել:

Պէյրուք

ՅՈՎՀ. ԲԷՇԻՇԵԱՆ

ԹՈՅՆԵՐ ԵՒ ԹՈՒՆԱՒՈՐՈՒՄ

(Շար, և Վերջ)

Յոգնութիւնը տեսակ մը թունաւորում է. շատ յոգնած մէկուն զգացած վիճակը ուրիշ բան չէ, այլ միայն ծանրը աշխատանքի իբր արդիւնք մեր իսկ թոյներուն մեր արեան մէջ հաւաքուիլը. ասոր դարմանը հանգստանալ է, որուն միջոցին մարմինը կ'ազատի չանոնք արտաքսելով: Ասոր իբր փաստ կրնանք հետեւեալ պարագան յիշել. շատ պարտասեալ շունի մը արեան (սէրունը) չիճուկը եթէ չյոգնած եւանդուն շունի մը երակներուն ներարկես, պիտի տեսնես որ այդ աշխոյժ և կենսալիւ շունը անմիջապէս ծանր յոգնութիւն մը պիտի զգայ և ինքզինքը գետինը փռելով պիտի պառկի:

Թերեւս ոմանց շատ տարօրինակ պիտի թուի երբ այս առթիւ յիշուի՝ թէ

գիրութիւն ալ տեսակ մը անուղղակի թունաւորում մ'է: Սրտասոժոր գիրութիւնը ուրիշ բան չէ այլ միայն մեր մարմինն մէջ իրենց պարզ վիճակով ամբարումը իւզային նիւթերու, որոնց մեր մարմինն մէջ այրուելով գործածուելէ վերջ մնացած թունաւոր մասերը պէտք էին դուրս հանուիլ: Ահա այսպէս, պէտք եղածէն աւելի եզոզ գիրութիւնը բեռ մըն է մարմին վրայ, կարեւոր արգելք մ'է արիւնի շրջանին դէմ և նիւթ մը որմէ մարմինը պէտք է ազատի այրումի միջոցաւ:

Մեր քիթին և տեսէն և կոկորդէն կամ թոքերէն դուրս ելլող մազանները միւլիօնաւոր մանրէներ և անոնց թոյները կը պարունակեն: Հասարակ ժողովուրդը գիտնալով կամ չգիտնալով շատ անգամ զանոնք կը կլլեն իր անվնաս նիւթեր: Մեծ սխալ մըն է այս. մեր ունեւերը և կոկորդ մեր երեսներուն նման պէտք է լուացուին և այս թունաւոր նիւթերէն մաքրուին: Զանոնք ստամոքսը զրկել կը նշանակէ թունաւոր նիւթեր ուտել և յաճախ մարմնի վերի գործարաններուն մէջ գտնուող հիւսն-գութիւնները վարիւններուն ալ փոխանցել:

Արտաքին և ներքին թոյներու դէմ պաշտպանութեան համար հետեւեալ կէտերը զօրաւոր կերպով կը յանձնարարենք:

1. Մի' մոռնար որ պնդութիւնը կամաց կամաց թունաւորում մըն է: Պոնէ օրը անգամ մը բնական պէտքի համար չուրս ելլել առողջութեան համար անհրաժեշտ պայման է:

2. Շատ մի' ուտեր. քանզի այսպէս ընելով թոյներ առնելու հաւանականութիւնը կ'աւելցնես մի քանի կերպերով. — ա. Շատ ուտելով կերակուրները լաւ չեն մաքրուիր և հետեւաբար նեխելու սահմանուած նիւթեր յառաջ կուգան: բ. Մտային նիւթերը ուղղակի

արեան մէջ խառնուելով կրնան քեզ վնասել: գ. Բնական է որ շատ կերակուրէն քանակով շատ արտաքսուելիք թոյներ յառաջ կուգան:

3. Առատօրէն կէր մածուն, կաթ, պտուղ և բանջարեղէն, որոնք մէզը կը շտայնեն և երկամունքի վրայ լաւ կ'ազդեն: Այս կերպով մարմնիդ մէջ գութոյներդ չեն հաւաքուիր:

4. Ինքզինքդ ազատէ նշագեղձերուդ (թոնսի), կոկորդիդ և ախաներուդ մէջ միքրօպի բոյներէ և զանոնք բուժել տուր, ասոնք անզգալի կերպով քեզ ամէն օր կը թունաւորեն: Կոկորդիդ և քիթդ մէջ յառաջ եկած մազասը մի' կլլեր:


5. Յաճախակի լողանք ըրէ՝ մորթդ մաքուր և գործօն պահելու և հետեւաբար քու թոյներուդ արտաքսուելուն զիւրութիւն տալու համար:

6. Աղիքներդ որդերէն մաքրէ՝:

7. Թէ հանքային և թէ գործարանական (բուսական և կենդանական) թոյներու միջոցաւ թունաւորումի պարագային, թոյնը տակաւին իր ազդեցութիւնը չունեցած, ընելիք առաջին բանը հիւսնդը անմիջապէս փոխել տալն է: Առատօրէն անոր զազը և աղի ջուր խմցնելով և մատդ կոկորդը զնելով զայն փոխել տուր: Առնուած թոյնը եթէ սխալիմէ, հիւսնդը թունաւորումէ կըրնաս փրկել եթէ առաս հում հաւկիթ և կաթ կրնաս խմցնել անոր: Առնուած թոյնը եթէ եօժ է, որուն դեղթափը օսլայ է, անմիջապէս հիւսնդին առատ կակուղ հաց և փաթաթէս կերցուր և զայն կը փրկես: Այս առտնին դարմանումը կատարելով հանդերձ երբէք մի' մոռնար անմիջապէս բժշկին զիմուել:

Հալիպ

(ՏՕԲԹ.) Ա. ՃԷՊԷՃԵԱՆ



**Ե. Բ. ԶԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՆԻ
ՄԵՐ ՆԿԵՂՆԵՐԵՐԸ**

Վերջին տարիներու միջոցին երիտա-
սարգներու կրթութիւնը, անոնց մա-
ւորական և ֆիզիքական ոյժերու օգ-
տագործումը և եկեղեցիին հանդէպ ա-
նոնց զիրքը ուշադրաւ հարցեր կ'ած-
են: Զանից Ընկերութեան Լօստօնի մէջ
տեղի ունեցած է համաշխարհային ժո-
ղովին մէջ այս հարցերը ուշադրութեան
առարկայ եղած են: Այս առթիւ կ'ու-
զենք այս ընկերութեան էութեան, կա-
րեւորութեան և գործունէութեան մասին
սեղեկութիւն տալ:

Ա. Զանից Ընկերութիւնը ի՞նչ է:

1. Երիտասարդներու եկեղեցին, ու-
րիշ խօսքով եկեղեցիի համար մարգա-
վայր մը, զպրոց մըն է ան: Այս ընկե-
րութիւնը 47 տարուայ պատմութիւն մը
ունի. իր գոյութիւնը կ'սկսի 1882 Փետ.
2 ին, երբ Վեր. Գլարքի միջոցաւ հոգե-
ւորապէս արթնցած և Յիսուսի նուիր-
ուած 30-40 երիտասարդներ միատեղ ե-
կան իրենց երիտասարդ հովիւին, Քը-
լարքին տունը, ու նախապէս Վեր. Քը-
լարքի կողմանէ պատրաստուած ուխ-
տագիր մը ստորագրեցին, որու նպա-
տակն էր այս երիտասարդները հոգեւոր
կեանքի մէջ հաստատել: Ներկայիս
այս ընկերութեան անդամներուն թիւն
է 4 միլիօն և մասնաճիւղերուն՝ 80000:

Ընկերութեան նպատակը չէ եկեղե-
ցիին մէջ ընկերային հաւաքոյթներ,
թէյնասեղաներ, և այլն սարքել, որոնք
հոգեւոր կեանք չեն նկատուիր երբէք:
Այս բոլորին առկը Քրիստոս պէտք է կե-
նայ և երիտասարդները պէտք է հաս-
կնան որ հոգեւոր կեանքը անձնազոհ
նուիրում մըն է Յիսուսի:

Ընկերութեան կենսունակութեան և
զօրութեան գաղտնիքը կը գտնուի ա-
նոր ուխտագրին սա բառերուն մէջ.
«Քրիստոսի ոյժին վստահելով», «ինչ որ
Ան կը կամի», և այլն: Անոր հիմն է Քը-

րիստոս, իսէալը՝ երիտասարդները Ա-
նոր առաջնորդել և Անոր համար ապ-
րիլ, նշանաբանը՝ Քրիստոսի և եկեղե-
ցիի համար, իսկ փակագիրը՝ ջանք Քը-
րիստոսով: Ընկերութիւնը իր օյժը եր-
բէք պիտի չկորսնցնէ քանի տառնց հա-
ւատարիմ մնայ:

2. Այս կազմակերպութիւնը երիտա-
սարգները աղօթելու վարժեցնող ընկե-
րութիւն մ'է: Ուխտագրին մէջ իր պայ-
ման դրուած է Ս. Գրքի ուսումնասի-
րութիւնը և աղօթքի կեանքը: Իր սիր-
տը կը կազմեն աղօթածողովները. ուր
կ'սկսկալուի որ անոր անդամները աղօ-
թեն և վկայութիւններ տան:

Լուսթեան Պահի Եղբայրակցութիւ-
նը այս ընկերութեան մէկ արդիւնքն է.
ասոր կրնան անդամակցիլ անոնք՝ որ
հետեւեալ խոստմնագիրը կ'ստորագրեն.
«Ինծի համար կեանքի կանոն պիտի ը-
նեմ ամէն օր, իթէ կարելի է առաուն
կանուխ, անոնուպն 15 վայրկեան ժա-
մանակ առլ լուռ խորհրդածութեան և
Աստուծոյ հետ ուղղակի յարաբերու-
թեան, ոյժի համար վստահելով Քրիստո-
սի»: Հազարաւոր մարդիկ իրենց ա-
նունները ուղղակի Պօթօն գանուող
կեղրոնը կը զրկեն, ուսկից իրենց կը
զրկուին մասնաւորապէս պատրաստուած
խորհրդածութեան նիւթեր:

3. Ընկերութիւնս եկեղեցիի անդամներ
կը պատրաստէ, շեշտելով հրապարակա-
յին աղօթքը, վկայութիւնը և հոգեւոր
ժողովներու մէջ անոնց առաջնորդելը:
Շար.

Ա. Վ. ՓՕԼԱՏԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

**ԳՈՒԷՃԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԻՍՐՏՆԵՐՈՒ
ԺՈՂՈՎՐ**

Տարսոնի, Խարբերլի և Այնթապի
Ամերիկեան Գոլէճներուն ուսումնա-
ւարտները, Մարտ 20ին հաւաքոյթ մ'ու-
նեցան Տօքթ. Ա. Ալթունեանի հիւան-
դանոցին մէջ: Երեք Գոլէճներէն 40ի

մօտ ուսումնաւարտներ ներկայ էին: Հաւաքոյթին նպատակն էր բոլոր Գոլէճականները իրարու մերձեցնել, որպէսզի կարելի ըլլայ միջգոլէճական միութիւն մը Սիւրիոյ մէջ Գոլէճ մը ունենալու գաղափարին չորսը: Ժողովին կը նախագահէր Տօրթ. Ա. Ժէպէճեան, խօսք տուն զանազան անհատներ, Տարսոնի Գոլէճէն Տիար Գրիգոր Ազիբեան, Վեր. Ս. Մանուկեան և Տօքթ. Ֆ. Յովնանեան. Եփրատ Գոլէճէն Տիար Յ. Յովսէփեան և Տիար Տ. Ղազարեան. Այնթապի Գոլէճէն Տօքթ. Ա. Ալթունեան, Վեր. Կ. Յարութիւնեան, Տիար Տ. Տաքէսեան և այլն, որոնք չեղտեցին Սուրիոյ մէջ Գոլէճ մը ունենալու պէտքը: Տր. Ճ. Մէրիլ BOYS' HIGH SCHOOL-ի տնօրէնը, զպրոցին մասին տեղեկութիւն տալով ըսաւ թէ պարոցին ընդհանուր պիւտճէն 2450 Օսմ. ոսկի է որուն չորս հարիւր ոսկին կը ծախսուի իբր շէնքի վարձք: Ապագայ Հալէպի Գոլէճին շէնքի գետինը ծախու առնելու համար ներկաներուն մէջ հանգանակութիւն կատարուեցաւ, և նախկին հանգանակութեան հետ ընդհանուր գումարը եղաւ 154 Օսմ. ոսկի:

ԱՂԷՔՍԱՆԴՐԷԹԻ ՄԷՋ

Հայ. Աւետ. համայնքը, 250 հոգիէ բաղկացեալ, իր կրօնական պաշտամունքը մինչև հիմա կը կատարէ տեղւոյն Երիցական եկեղեցիին սրահը, զրկուած ըլլալով պէտք եղած շէնքէ մը: Ուրախութեամբ կ'իմանանք որ ապագայ եկեղեցական շէնքին գետինը վերջերս ծախու առնուած է 90 Օսմ. ոսկի գումարով մը:

ՀԱՄԱԺՈՂՈՎ ՊԱՍԼՊԷՔԻ ՄԷՋ

Ս. Դրքի Երկիրներու Կիրակնօրեայ Դպրոցներու Միութիւնը իր առաջին համաժողովը պիտի ունենայ Պաալպէքի մէջ, Ապրիլ 8-14 ին: Հալէպի Աւետ. Եկեղեցիներու պատգամաւորներն են Տիար Ն. Իշխանեան, Պատ. Ա. Հատիտեան և Տիար Տ. Ճ. Խրլոբեան:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՔԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նոյն օրուան իրիկունը երիտասարդ աւիւպը իր անհեղինակ նստած էր, և շատ ուրախ էր որ դրամն ու զոհարեղէնները գտնուած էին, անոնք Մալիաի փաթթոցին մէջ ծրարուած և ծառի մը տակ թաղուած գտնուեցան, և այդ բոլորին անոնք ու Մալիա ոստիկանապետին պաշտօնատեղին կը գտնուէին: Անմիջապէս լուրը հեռագրով հաղորդուեցաւ ղեկնութեամբ մեկնած Լօրտին ու իր տիկնոջը: Ու այս կերպով այդ խորհրդաւոր խնդիրն ալ մաքրուեցաւ...: ու աւիւպը կը մտածէր...: Յանկարծ Պապու իր միտքն եկաւ. Պապու այս օրերս զոհունակ դէմք մ'ունէր. Մալիա միթէ Պապուի ազգականը չէ՞ր. ու միթէ այս զոհութեան ղէպէն երկու օր առաջ չէ՞ր որ Պապուի դէմքին վրայ հարուածի նշանները երեւցան...: Սաւիպը զանգակը գարկաւ, և սպասաւորին հրամայեց որ Պապուն իրեն կանչէ անմիջապէս:

«Բարի իրկուն, տղաս», ըսաւ երբ Պապու ներս մտաւ ու դէմը կայնեցաւ, «արդեօք հիմա՞ ալ չես կրնար ըսել ինչ որ անցեալ օր չըխօսեցար:»

Պապու ամէն բան խօսեցաւ որովհետեւ այլևս պահելիք զաղանիք մը մնացած չէր:

«Դուն յիրաւի լաւ սքսութ մ'ես», ըսաւ աւիւպը ուրախութեամբ տոք ելլելով ու ձեռքը անոր ուսին դնելով, «միայն մէկ անգամ քու մասիդ կասկածեցայ, ատոր համար ալ քու ներումդ կը խնդրեմ, որչա՞փ կը փափաքէի որ քեզ նորէն հանգէսին մասնակից ընէի, բայց կարելի չէ, քանի որ օրը մօտեցաւ և դուն փորձերուն չը գտնուեցար. կը վախճամ պէտք եղած վարժութիւնը չունիս:»

Պապու շատ դոհ եղաւ, իր սիրտը

Նորէն ցնձմամբ կը բարախէր այն իւր-
կուն, որ իր սիրելի աանիպին զազափա-
րը իր մասին շտկուած էր:

Երկու շաբաթ վերջ մեծ կառաջա-
րիչը եկաւ, և խեղճ Պապուի սիրտը
կ'այրէր երբ իր ընկերները հանդէսին
մէջ կը դատարարէին, բուրգեր կը շի-
նէին ու գետնին վրայ պառկելով «Բարե-
եկաք» բառը կը շինէին, Նորին Վսե-
մութեան դէմ: Եւ երբ գլխաւոր սքա-
ռութները այդ մեծ մարդուն կը ներկա-
յանային մէկիկ մէկիկ, Պապու կ'զգար
թէ իր սիրտը բերանը կ'ուզար: Ինքը
անոնց առաջնորդն էր, և երբ կը խոր-
հէր թէ միլիօնաւոր հնգիկներուն մեծ
կառավարիչը իր հետ պիտի խօսէր ե-
թէ...:

Երբ մրցանակները տրուեցան, մի-
սիօնար աանիպը ոտք ելաւ, և մեծ բազ-
մութեան լուսթեանը մէջ այսպէս խօսե-
ցաւ. «Տիկնայք և Տիարք, մէկ բան մը
միայ ըսելիք. արդէն Նորին Վսեմու-
թեան պատմած եմ թէ ինչո՞ւ մեր սքա-
ռութներուն ամէնէն լաւ հանգէսին չէ
մասնակցած այսօր: Ձեզմէ շատեր գի-
տէն թէ Պապու իր գէմքին վրայ այն
վէրքի նշանները ստացաւ միայն ան
պատճառաւ որ ինք չուզեց Մալիաի ոճ-
րագործութեան մասնակից ըլլալ, կո-
ղպտելու համար զատաւորին տան զո-
հարեղէնները. գիտէք զարձեալ թէ ես
սխալեցայ ու կարծեցի թէ Պապու կուր-
տեր էր ու խնդրը ինձմէ կը պահէր:
Ու երբ խնդրոյն մանրամասնութիւնը
Նորին Վսեմութեան յայտնեցի, անիկա
Պապուի փորձութեան մէջ ցոյց տուած
քաջութեան մասին այնքան հիացաւ որ
ուզեց անոր մրցանակ մը տալ իր կողմէ:
Պապու, հոս եկուր:»

Պապու շուտեցաւ, կարծես քար
կտրեցաւ, ինչ ընելիքը չէր գիտէր: Ե-
տեէն մէկը հրեց զինք, ու Պապու ինք-
զինքը Նորին Վսեմութեան առջև դրաւ,
տեսաւ որ իրարու ձեռք կը թօթուէին,

և լսեց որ մեծ ճերմակ կառավարիչը
կ'ըսէր իրեն. «Ապրիտ, ազատ, ազէկ
ըրիր,» և Պապուի տուաւ գեղեցիկ տու-
փի մէջ գետնիցուած արծաթէ ժամացոյց
մը: Պապու բարեկեց զայն, կարծես թէ
երազի մէջ էր...:

Հանգէսէն վերջ Պապուի բարեկամ-
ները շրջապատեցին զինքը և կ'ազաչէին
որ ժամացոյցը տեսնեն: Պապու ժամա-
ցոյցը հանեց, միւս կողմը դարձուց և
տեսնուեցաւ որ ետեւ սա բառերը փո-
րագրուած էին. «Նորին Վսեմութեան
կառավարիչէն» Պապուի, որ լաւ սքա-
ռութ մըն է:»

(ՎԵՐՋ)

ՓՈԽԱՆ ԸՆԿԱՆԱԳՐԻ

(ի հաշիւ 1929ի բաժնեկցիին)

Ստացանք Վեր. Ս. Աղապահանէ մէկ
սթէրլինկ և մէկ տոլար, Վեր. Ս. Միւ-
քոնեանէ մէկ տոլար, Վեր. Է. Փարթը-
րիճէ 3.00 ոսկի սուրիական. Վեր. Ճ. Զ
Մարգինէ 1.50 տոլար, Տիարք Ժօրճ
Գոնտուրաճեանէ երեք բուպի (1 տոլ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սզգոտրիւն և Կոնֆ ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ
ՀՈՒԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՅՕԴՈՒՍԾՆԵՐ

Տասնաքսնեայ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մահեկ Վերջը Կեանք Կաճ

ԹՐԳ. Ա. ԿՈՒՅՈՒՄՃՈՒԵԱՆ

Արձաշանցի Բժշկոտրիւնը

ՊԱՏ. ՅՈՎ. ԱՐԳՈՐԵԱՆ

Միւտրիւն

ՅՈՎ. ԲԷՇԻՇԵԱՆ

Թոյնիւր և Թուհաւորուլ

ՏՕԲԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

Ե. Բ. Ջանից Ընկերոտրիւնը և Մեր Ե-
կեղեցիները ՏՐԿ. Ա. Վ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿԱՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE